Խոշոր եզրաչափերի և էլեկտրական թափոններ

Բոլոր խոշոր կամ էլեկտրական իրերը, օրինակ՝

- **Կենցաղային իրեր**, օր.՝ հեծանիվներ, այգու կահույք, սեղաններ, աթոռներ, պահարաններ, ներքնակներ, դարակներ, գորգեր, մեծ չափերի պլաստմասսայե առարկաներ
- **Խոշոր էլեկտրական սարքեր**, օր.՝ լվացքի մեքենաներ, չորանոցներ, սառնարաններ և սառցարաններ, վառարաններ և գազօջախներ, ամանալվաց մեքենաներ, հեռուստացույցներ
- **Փոքր էլեկտրական սարքեր**, օր.՝ սրճեփները, թոսթերները, արդուկները, համակարգիչները, էլեկտրական սափրիչները և շաղափիչները համարվում են էլեկտրոնային թափոններ և ենթակա են առանձին հավաքման: **Դրանք կարելի է անվճար հանձնել.**
  - ալթենեսսենի (հասցե՝ Lierfeldstraße 49) և Վերդենի (հասցե՝ Laupendahler Landstraße 150) վերամշակման կետերում
  - EBE վտանգավոր թափոնների ընդունման շարժական կետում
  - որոշ առևտրային ընկերություններին (պետք է ունենան նվազագույնը 400 քմ առևտրային նշանակության տարածք)

Խոշոր եզրաչափերի թափոնների համար անվճար պայմանավորվածություն ձեռք բերեք

- հեռախոսով՝ **0201/854-2222**
- էլ. փոստով՝ **sperrmuell@ebe-essen.de**
- առցանց՝ **www.ebe-essen.de/sperrmuell-online**
- **կամ հավելվածով (Wir räumen ab!)**

Խոշոր եզրաչափերի թափոնների տարբեր տեսակները , մետաղ, պլաստմասսա, փայտ, խոշոր եզրաչափերի այլ թափոններ և էլեկտրական սարքեր, հեռացվում են տարանջատ ձևով, հետևաբար, կախված հանգամանքներից, կունենաք մի քանի պայմանավորվածություն,

Հրատարակիչ

Entsorgungsbetriebe Essen GmbH
Pferdebahnstr. 32
45141 Essen

Սպասարկման բաժին

Հեռախոս՝ 0201/854-2222
info@ebe-essen.de

www.ebe-essen.de

Օգտագործված թուղթը 100 % մակուլատուրա է և նշված է «Կապույտ հրեշտակ» խորհրդանիշով

Թարմացում՝ 07/2022 թ.

Entsorgungsbetriebe Essen GmbH

armenisch

Ո՞ր թափոնը՝ ո՞ր տարայում

Ճի՛շտ տարանջատում!


Entsorgungsbetriebe Essen GmbH

Կապույտ տարա

Թղթե և ստվարաթղթե ամեն ինչ

Ծրարներ, գրքեր, ստվարաթղթե արկղեր, կատալոգներ, թուղթ, թղթե տոպրակներ, ստվարաթուղթ, տուփեր, ձևավոր ստվարաթուղթ, ամսագրեր, թերթեր, թղթից կամ ստվարաթղթից փաթեթավորումներ, օր.՝ ալյուրի տուփերը, լվացքի միջոցների ստվարաթղթե արկղերը

Դատարկում՝ 4 շաբաթը մեկ



Շագանակագույն տարա


Խոհանոցային և բոստանային թափոններ

- **Խոհանոցային թափոններ**, օր.՝ բանջարեղեն, մրգերի կեղևներ, ձվի կեղև, սուրճի մրուր, թղթե ֆիլտրեր, թեյի փաթեթներ, ոսկորներ, կերակրի մնացորդներ
- **Բուսական թափոններ**, օր.՝ թառամած ծաղկեփնջեր, ծաղկամանների օգտագործված հող, սենյակային բույսերի թառամած կտորներ, այգու թափոններ, ծառերի, թփերի և խաղողի վազի էտման թափոններ (մանրացված), գազոնի կտրման թափոններ (չորացած), բույսերի մնացորդներ, տերևներ, մոլախոտ

Դատարկում՝ 2 շաբաթը մեկ







Մոխրագույն տարա

Բոլոր կենցաղային մնացորդները

եփված սննդի մնացորդներ, միս, հիգիենիկ թափոններ, օր. թղթե անձեռոցիկներ, տակդիրներ, սպեղանիներ, փոշեկուլների թղթե պարկեր, ավլուկք, մոխիր, կատվի հիգիենիկ լցանյութ և այլն, վերօգտագործելի նյութեր, ծխախոտի մնացուկներ, դեղամիջոցներ

Դատարկում՝ շաբաթը մեկ




Դեղին տարա

Վաճառքի դատարկված փաթեթավորումներ պլաստմասսայից, մետաղից և համակցված նյութերից

- **Պլաստմասսա**, օր.՝ թաղանթներ, տոպրակներ, սպասք լվանալու, լվացքի և մարմնի խնամքի միջոցների շշեր, կաթնամթերքի մարգարինի և նման այլ ապրանքների տարաներ, փրփրանյութեր, պոլիստիրոլի փրփուր
- **Մետաղ**, օր.՝ պահածոներ, ըմպելիքների տարաներ, կափարիչներ, ալյումինե ամաններ, ալյումինե կափարիչներ, ալյումինե նրբաթիթեղ
- **Համակցված նյութ**, օր.՝ ըմպելիքների և կաթի ստվարաթղթե տարաներ (Տետրապակ)

Դեղին տարայի վերաբերյալ հարցերի կամ խնդիրների դեպքում դիմեք անմիջապես **Remondis-ին՝ 0800/1223255 հեռախոսահամարով** կամ **dispo.essen@remondis.de էլ. փոստով**







Վտանգավոր թափոնների ընդունման շարժական կետ

Թունավոր և ուտիչ հատկությամբ ամեն ինչ և փոքր էլեկտրական սարքեր

Մարտկոցներ (ավտոմեքենայի և փոքր մարտկոցներ), արգելակային հեղուկ, սառեցնող նյութ, քիմիկատներ, հոսանքախնայող լամպեր, խողովակավոր լյումինեսցենտային լամպեր, ներկեր, լաքեր, լուծիչներ, թթուներ, ալկալիական լուծույթներ, կենցաղային մաքրող միջոցներ, բուսական ծագման թույներ, սփրեյների շշեր մնացորդներով:

Վտանգավոր թափոնների ընդունման շարժական կետի ձեզ մոտակա տեղերին ծանոթացեք այստեղ՝ **www.ebe-essen.de/schadstoffmobil**



Մակուլատուրայի տարա

Թղթե և ստվարաթղթե ամեն ինչ



Ապակու թափոնների տարա

Ապակուց տարաներ

Շշեր և պահածոների ապակյա տարաներ՝ տեսակավորված, շագանակագույն ապակի, սպիտակ ապակի, կանաչ ապակի (կապույտ ապակին ընդունվում է որպես կանաչ ապակի)

Օգտագործված հագուստի տարա

Գործվածքներ, որոնք այլևս պետք չեն

Հագուստ (տոպրակներով), կոշիկներ (կապված զույգերով)

Մակուլատուրայի, ապակու թափոնների կամ օգտագործված հագուստի ձեզ մոտակա տարաները կգտնեք այստեղ՝ **www.ebe-essen.de/depotcontainer**



Entsorgungsbetriebe Essen GmbH